

ՀԱՆԴԻՍ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Դ Պ Ր Ո Ց Ք

ԵՒ

Ի ՆԱՄՔ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ

Ա

Դպրոց և ընտանիք, ուսուցիչ
և ուսանող:

Մեր բարոյական և նիւթական երջանիկ կամ ապերժանիկ ապագայն 'ի դպրոցաց ունի կախումն. վասն զի 'ի դպրոցաց կ'անցնի ճշմարիտ ազատութեան, ազնուական ձեռնարկութեանց և ուղիղ բարոյականութեան առաջնորդող ճամբան: Բայց դպրոցք եթէ կ'ուզեն ստուգապէս հասնել այս չքնաղ նպատակին, պէտք է համապատասխանեն, աւելի քան ինչ որ մինչև հիմա ըրած են, ընկերութեան բարձրագոյն պահանջմանց: Ուսուցիչք և դաստիարակք պէտք չէ բանի մը խնայեն 'ի բարեկարգ շինութիւն դպրոցաց, խաղարանաց և մարմնակիրք հրահանգութեանց, որոց ընտրութեան մէջ հարկաւորապէս միակ դիտումնին տղոց առողջութիւնն ըլլալու է: Դարձեալ հարկ է որ խորաքնին նկատողութեան առնուն՝ ուսմանց կարգերը և դասառութեանց ժամերը, և թէ տղոք ամեն բանէ առաջ պէտք է որ խորհիլ սորվին. ուստի փոխանակ ամուլ և անպտուղ բռնադբօսութեան պարտասեւել նոցա իշողականը, տալու են կարգաւորեալ տեղեկութիւն մ'այն օրինաց՝ որ կը կանոնաւորեն զրոութիւն և զմարդկային յօրինաւածութիւն. վասն որոյ պարտ է որ դաստիարակք ճիշտ դադարար և ընդարձակ ծանօթութիւն ունենան մարդոյ բնական ու բարոյական կրթութեան վրայ:

Բայց ընդ հակառակն թէ որ աչք մը տանք մեր դպրոցաց մեծագոյն մասին, փոխանակ միւթիւրականի՝ անմիւթար տեսարան

մ'ընդ առաջ կ'ըլլայ մեզ. դաստիարակութիւն բոլորովին անկատար թէ 'ի բնականին, թէ 'ի մտաւորականին և թէ 'ի բարոյականին. որուն եթէ կայ չքմեղութիւն՝ այն է, ինչպէս կը լսուի շատ անգամ, որ պակասաւոր եղած է նախնական, տնական կամ մայրենի դաստիարակութիւնն, որ անտարակոյս շատ կ'օգնէ դպրոցականին: Բայց և յայտնի կը կշտամբին դաստիարակք, վասն զի ըսել է թէ ծնողք և մասնաւորապէս մայրք՝ լաւագոյն դաստիարակութիւն մ'ընդունած չեն 'ի դպրոցս, և ոչ դոյզն դադարար ունեցած նիւթական և բարոյական դաստիարակութեան վրայ:

Դաստիարակք և ուսուցիչք թէ որ կ'ուզեն կրթիլ տղայ մը և ընել ընտիր քաղաքացի, ամեն բանէ առաջ միտ դնելու են այս ճշմարտութեանց. Զամենայն ինչ որ կը գործէ մարդ, կամ որ գործի 'ի մարմնի և 'ի վերայ մարմնոյ մարդոյ, ինչպիսի զօրութիւն ալ ունենայ զարգացման, գործարանաց և մէկ քանի նիւթոց միջոցաւ կը կատարուին, որոշեալ կազմութեամբ և տարրարանական բաղադրութեամբ: Այս բաղադրութեան և գործարանաց կազմութեան փոփոխութիւն մը՝ ներդաշնակութեան խանգարումն և գործարանաց գործութեան կորուստ կը պատճառեն. որոնք շարունակ կը սպառեն գործարանական գոյացութիւնը, և այս սպառումը կը տկարացնէ գործարանաց գործութիւնը: Այսպիսի սպառմամբ, գործարանական գոյացութեանց սպորման պատճառաւ 'ի ձեռն թթուածնի, զանազան նիւթի կը ձեւանան, որոնք եթէ չվերանան գործարանաց վրայէն, և մանաւանդ եթէ դիզուելու որ ըլլան, կը դժուարանայ կամ մանաւանդ բոլորովին կը կորսուի գործարանաց ոյժը:

ՊԵՐԱ Դ.

Նոյնպէս չափազանց աշխատութիւնն պատճառ է գործարանաց տկարացման. և եթէ սպառեալ մասին տեղ չամաշափ քանակաւ ուրիշ գործարանական զոյացութիւն չփոխանակուի, նոյն և նման սպառելոյն, գործարանք բոլորովին անկարող կ'ըլլան: Սպառումն և գործարանաց վերականգնումն թթուածնին ազդեցութիւնն և սպառեալ նիւթոց արտահանութիւնն կախումն ունին, ինչպէս նաև գործարանաց վերականգնիչ նոր նիւթոյն տեղափոխումն արեան չըջանէն: Բայց մինչդեռ սպառումը գործարանաց գործածութեան ատեն կ'ըլլայ, վերականգնումն յանգործունէութեան. և անգործութեան այս կարևոր փոխանակութիւնն կը կախուի դարձեալ գործարանաց զարգացումը թէ քանակաւ և թէ զօրութեամբ:

Ուսուցիչք և գաստիարակք գիտնալու են դարձեալ՝ որ մարդ թէ որ ողջ ծնած է, մարմնոյն մէջ տեսակ մը կազմութիւն ունի, որուն օգնութեամբք պիտի խորհի, զգայ ու կամենայ, վասն որոյ մտաւորաբար գործն փնտկի մէջ է. ուստի ամեն բանէ առաջ սորվելու է ճաննալ զայն: Այս կազմութիւն ուսածնիս ուղեղն է, իր երակներովն և զգայականութեան գործարաններովն, որ յինքն ինքեան մտաւոր գործունէութեան որդեալ չափ չունի, և ոչ իսկ բնածին բերումն 'ի չար կամ 'ի լաւ անդու. այլ այս ամեն բաներն վարժութեամբ կամ կրթութեամբ կ'ընդունի, նման միւս գործարանաց՝ որոնք իրենց շարժունքները հրահանգօք կը սորվին, ինչպէս է խօսել, երգել, պարել, և այլն: Ոչ եղեռնագործ կը ծնանի մարդ, և ոչ բարեգործ. կրթութեամբ միայն այնպէս կ'ըլլայ:

Ուղեղն կը մղուի 'ի մտաւոր գործողութիւն տպաւորութեանց ձեւերով, զորս կ'ընդունի մաս մի արտաբնատ՝ գործարանաց ու զգայական երակաց միջոցաւ, և մաս մ'ալ՝ 'ի ներքուստ: Ուղեղն կը ձևակերպի ընդունած տպաւորութեանց համեմատ, և կ'աճի ու կը կատարելագործի փոքր առ փոքր 'ի ձեռն վարժութեան. և ինչ որ գործէ ապա, արդասիր է միշտ նախնական տպաւորութեանց ու վարժութեանց: Ըստ զանազան ազդեցութեանց զանազան տպաւորութեանց, ուղեղոյ գործունէութիւնը կրնայ կրպաւորիլ զանազանապէս, և անոր այս հրահանգին յատուկութեամբ՝ կրնայ կրթուիլ մարդ գիւրութեամբ եթէ 'ի բարին և եթէ 'ի չարն, և ընդունել 'ի մատող տիոց այնպիսի գաղափարներ, մինչև համարել թէ մէկտեղ բերած ըլլայ յաշխարհ:

Ուրեմն դաստիարակութեան գլխաւոր կանոնն է՝ հեռու բռնել տղէն ծնած վայրկենէն զայն՝ որուն պիտի չի վարժի, և ընդհակառակն կրկնել անդադար զայն ինչ որ իրեն երկրորդ բնութիւն պիտի ընէ: Մեծապէս կը սխալի այն դաստիարակ՝ որ համարի թէ կրնայ ընդունիլ չափահաս մարդն այն ծանօթութիւնքը՝ որ պիտի ունենար 'ի մանկութեան, և ազատիլ բոլորովին 'ի չար ունակութեանց յետ ծերութեան: Այդ երկչոտութիւնն, այդ աւելորդապաշտ բարքն, և բարուց ուրիշ բազմատեսակ թիրութիւնքն՝ որ արմատացեալ են 'ի մանկութենէ չափահաս մարդոյ ուղեղին մէջ, այնպէս խորարմատ հաստատուած են, որ չի կրնար դիւրաւ զերծանիլ անոնց՝ մէ՛ ոչ փորձով և ոչ փաստերով: Եւ հաշայս պատճառաւ ապագային համար մտաւոր ու մարմնաւոր դաստիարակութեան հաստատուն ու տեւական հիմ մը պէտք է գնել տղուն սրտին մէջ, թէ 'ի տան և թէ 'ի դպրոցս:

Կը պահանջուի դարձեալ 'ի դաստիարակաց որ գիտնան ըստ բնութեան կառավարել տղոց մտաւոր գործարանը, այսինքն ուղեղը. և զգուշանալու են որ ոչ միայն իրենց դաստիարակութեան վրիպակ ոճովն չի վնասեն տղոց նիւթական առողջութեանը, այլ և այնպիսի վիճակի մէջ գնեն՝ որ գիտեան պահել իրենք գիրենք 'ի հիւանդութեանց. վասն զի ուսումը առանց առողջութեան քիչ արժէք ունի: Միայն առողջ մարդն կրնայ օգտակար ըլլալ իր ժամանակակցացն ու յետագայից, ինչու որ լուսաւոր հանճարն և զօրաւոր միջոցն ու կամիքն՝ յառողջ մարմնի միայն կրնան բնաւիր: Պէտք չէ նոյնպէս մոռանալ դաստիարակք՝ որ աշակերտք իրենց տարբեր խառնուածոց պատճառաւ՝ տարբեր կրթութիւն ալ ունենալու են մտաւոր զարգացման ու առողջութեան պակասութեան համար:

Եւ որովհետև կը գտնուին այնպիսի դաստիարակք՝ որ գրիթէ ամենեւին փոյթ չեն տանիր տղոց մարմնաւոր առողջութեան, անոր համար Եւրոպիոյ մէջ մասնաւոր տէրութիւնն կարգեալ բժիշկներ կան, որ կը քննեն տղաքը խտութեամբ թէ դըւրոց մտնելու միջոց և թէ բոլոր դպրոցական տարւոյն մէջ, իրաւ է թէ շատ անգամ տղոց դպրոցական տարիներուն մէջ ունեցած հիւանդութիւննին՝ անմիջապէս իրենց հասակին հետեանքն է. բայց նոյնպէս իրաւ է որ այդ հիւանդութիւններն զորս դպրոցական կրնանք անուանել, յառաջ գան ստէպ տղաքը լաւ չի հասկընաւէն և ըստ այնմ չի գործընէն: Սակայն մե-

ծառայէս կ'անիրարինք դպրոցաց՝ եթէ զիրենք այս հիւանդութեանց միակ ու գլխաւոր պատճառ անուանենք, կամ ուղեւորներ անմիջապէս ուսման հետեւանք համարիլ, վասն զի դպրոցներէն աւելի յանցաւոր են ծնողական տուներէն, Դպրոցաց միակ յանցանքն այն է՝ որ Հաստատութեամբ այդ հիւանդութեանց առջև չեն աւելոր, այլ մանաւանդ կը զրգռեն վատթար առաջնորդութեամբ անուղղակի կերպով. ոչ կ'իմացնեն տղոց թէ ինչ է հիւանդութիւննին, և ոչ ալ կը սորվցնեն անոնց զէմ պատեալագմելու միջոցները:

Ինչպէս որ ծնողաց միայլ բարոյական գաստիարակութիւնն ՚ի մանկական Հասակի՝ է գլխաւոր պատճառ այժմեան մեծագոյն մասի մարդկութեան բարոյական անկման, նոյնպէս ծնողաց յանցանք է՝ չափաւաս մարդկանց մեծագոյն մասին վատառողջ կեանքն: Ուսմանէ յառաջ եկած հիւանդութիւնք թէ և չեն մահացուք, բայց զգուշութեան արժանի են, ինչու որ տղան բոլոր կենացը վրայ կրնան մեծ ու անզարմանքի միւս առթիւ: Այս հիւանդութիւնքն կը վերաբերին առաւելագլխաւոր և երակաց դրութեան, աչաց, ողնաշար ոսկին և արեան, որ է ըսել մտաւոր ու անընդաբեր կարեւոր գործարանաց: Ինչպէս է գլխացաւ, պոտոյ գլխոյ, դռնչիւն աւանջաց, վերնոտութիւն, մաշկոտութիւն, որ կը վերաբերին երակային և ուղեղային դրութեանց, ինչպէս նաև կարեւատեսութիւն, չնչարգելութիւն և ուրիշ հիւանդութիւնք:

Այս հիւանդութեանց՝ որոց ենթակայ են տղայք դպրոցական Հասակնուն մէջ, թէ ուսուցիչք և թէ ծնողք պէտք է գիտնան ընդդիմանալ զօրութեամբ ՚ի սկզբան. Համոզուելու համար թէ ինչպէս այս հիւանդութեանց սկիզբը ՚ի ծնողաց և ոչ ՚ի դպրոցաց, բաւական է հետեւել միայն տղուն կենացը՝ սկսեալ իրեն ծննդեան օրէն մինչև դպրոցական Հասակը: Դիմեցի մանկան՝ կաթի տեղ՝ որ է յարմարագոյն սնունդ իր բնութեանը, ժամանակէն առաջ այնպիսի կերակուրներ կու տան (բաղիացեալ յաւելոյ և իշաբարոյ) որ անտանելի է թէ ոսկերց ուժոյն և թէ երակաց, թէ ուղեղն է թէ ջրաշար: Գինգի մանկան թարմ ոսկերները դեռ բաւական պնդացած ու զօրացած չեն, և ոչ նիւհար ու թոյլ մարմինը ըստ բաւականի երակներով Հաստատեալ, կը Հաննի զտալն յանկողնէ և կը նստեցնեն, և կամ անհորձ աղախնոյ մը բազկաց մէջ տուած՝ չրջեցնել կու տան, և կամ յառաջ քան զժամանակն կը փորձեն բռնութեամբ ոտից

վրայ կեցնել կանգուն և կամ պտտոցնել, որոց ամենքն ալ միտասկար են տղուն ապագայ կենաց առողջութեանը. վասն զի այս կերպով ողնայար ոսկրն է թիկանք երակները մշաստելով, անհնարին է սպնուհետև որ մարմինը կարենայ ուղղութիւն առնուլ:

Այլեք զատ՝ ծնողք տղոց ալ ձեռքը և ալ բազուկը գործածել կու տան միշտ. որոց չափազանց գործածութիւնը՝ կը պատճառէ կորացումն յալ կողմն ողնայարին, Հասակին աճման Համեմատ չեն ըլլալոր պահանջուած խնամքն, և հետեւաբար կը խանգարի տղոց առողջութիւնը. անյարմար կերակուրներ ու ջերմացուցիչ բմպելիներ (բաքէ, թէյ, դարբժուր, գինի) դրժուարամարս նիւթեր և զրգուի ու անկանոն ուտելիքներ (բաղարանիք). սակաւ Հանգիստ ու երկար Հակումն (թատրոնք, այցելութիւնք, վատառողջ օգ (ննջարանք). անյարմար ու չափազանց նեղ զգեստ և անմաքրութիւն մարմնոյ. ահաւասիկ ասոնք են տղոց հիւանդութեան պատճառներն ՚ի կողմանէ ծնողաց: Դարձեալ երբ տղան նստած կը գրէ կամ կը նկարէ, ամենեւին մտադիր չեն ըլլար ինչպէս նստած է, և թէ ինչ տեսակ լուսով կ'աշխատի, սաստիկ թէ տկար լուսով: Տղուն ձեռքը պզտի տառերով տպագրեալ գրքեր կու տան, կամ մանրահիւս գործուածքներ, որոնք մշասակար են աչաց և ողնայարին, մանաւանդ եթէ ծնողք ու չի դնեն նստելու կերպերնուն և լուսոյ աստիճանին:

Ուրեմն եթէ քննել տանք տղաքը դպրոց մտնելու տանն բաղնիքով բժշկի մը, կ'իմանանք որ այն հիւանդութիւնքն որ պիտի փայլին ապա դպրոցական Հասակին մէջ, իրենց սերմը մատաղ Հասակէն ունեցած են, ուստի ծնողք ու չենելու են այս հիւանդութեանց ու մաքառելու անոնց զէմ: Երբոր տղայ մը դպրոց մտնելու Հասակին մէջլաւ կըթաւած չէ, բոլոր յանցանքն մօրն է. վասն զի տղան Հապիկ թէ ծնած երբոր բաղկաց վրայ կը տարուի, կը գզուի ու կը փայփայտի, և գիտէ թէ լալով ու պոռաւով կրնայ ընդունել ուզածը, մէկէն ունակուի իրեն կը դառնայ իրեն, և քիչ ատենէն ծնողք ու ազգականք իրենց դիրաթք բաւութեամբ: Տղուն անընդել բարքն և ուրիշ թերութիւնքն ներքի կը Համարուին, ըսելով թէ տակաւին տղայ է, չմեղանք, դեռ խելքն չի Հասնիր, երբոր մեծնայ բոլորովին կը փոխուի, իբր թէ խելքն մէկ անգամով յանկարծ կը Հասնի ՚ի մարդն. մինչ զի եթէ

կ'ուզենք որ խելքն բարւոք ծառայէ իր նպատակին, աստիճանաբար պէտք է զարգանայ և վարժի ըստ որոշեալ կանոնաց: Բայց որ ցաւալի ևս է, կան ծնողք որ կ'ուրախանան իրենց տղոց մէկ քանի թերութեանց վրայ, ինչպէս ստախօտութեան ու գողութեան, սխալմամբ՝ խելքի ու հանճարոյ նշան համարելով զանոնք, մինչդեռ ընդհակառակն պէտք էին պատժել և առաջն առնուի: Ե երբ տղայք հասակնին առնելէն ետքը յանդիմանութիւն իբրեւ գող կամ ստախօս, այն ատեն կ'արթննան ծնողք ու կը ցաւին իրենց զօբախտ ճակատագրին վրայ՝ իրեւ ծնողք չարաբարոյ որդւոց, առանց մտածելու թէ իրենք եղանակաւոր պատճառք: Ուրեմն առաջին ամաց մէջ տրուած դաստիարակութիւնն է միայն տղոց ապագայ ապականութեան և ծնողաց և որդւոց զօբախտութեան պատճառք:

Դաստիարակաց պարտքն առ առողջութիւն տղայոց՝ կրկին է. Ա. Պէտքն ուշ զնեն որ տղուն առողջութիւնը չի փորձեցի գործարանաց սխալ գործածութեամբ, զգուշացնելով այն ամեն բաներէ որ դպրոցին մէջ կրնան վնաս առթիլ տղուն առողջութեանը. իսկ որ չի գիտեր ճիշտ կերպով մեկնել, պարզել և ուսուցանել առողջութեան կանոնները, պէտք չէ և ոչ իսկ յանձն առնուայք պաշտօնը: Եւ դարձեալ որովհետեւ տղան մտաւոր և նիւթական աղէկութիւնը կը պահանջէ ամեն բանէ առաջ պատշաճաւոր ուսումնարան յարմար ու կարեւոր նիւթերով ու գործիքներով, վասն որոյ դաստիարակն գիտնալու է դարձեալ դարմանել այս սլատեհական պէտքերն ալ, ամեն բանէ աւելի ուշ զնելով տեղւոյն, օդոյն, բարեխառնութեան, լուսոյն, ջերմութեան, նրսատարանաց ու գրասեղանաց: Բ. Փափաքելի է դարձեալ որ սորվի աշակերտն մարդկային մարմնոյն վիճակը. գիտնայ թէ ինչպիսի բաներ վնասաբեր են իրեն առողջութեանը, կամ ինչ բան անհրաժեշտ կրնա որ իր կենացը, միով բանիւ գիտնայ՝ լինել և մնալ առողջ և վերաստանալ զառողջութիւն:

Բայց շատ անգամ այս վերջին պարտուց մէջ կ'անհոգանան դպրոցք, և հետեւաբար ամենաձանր պատասխանատուութիւն մը կը կրեն վրանիւն: Մարդկութեան մեծագոյն մասը վշտացած կը գանգատի անգալար մտաւոր ու նիւթական սխալ դաստիարակութիւն ընդունելուն վրայ: Ե սուկայն տակաւին ինքն զպրոցք բարոյապէս և նիւթապէս հաշմ տղայքներով. շատ երիտասարդք անկարող եղած են ծառայել իրենց հայրենեացը, և բազում երիտա-

սարդուհիք լաւ չեն կատարած իրենց տիկնութեան ու մայրութեան պաշտօնը, և գործաւորաց մեծագոյն մասն իրենց այրական զօրաւոր հասակին մէջ ծերացած: Ուրեմն նուիրական պարտք մը համարելու են իրենց դպրոցք՝ կրթել զմարդչ պատշաճապէս ի մանկութենէ, որպէս զի ինքն ալ կարենայ աւանդել ապա իր որդւոցը՝ մտաւոր ու նիւթական առողջութեան վրայ հաստատուն գիտութիւն մը, և տայ իր առողջ ու օգտակար կենանքն ընկերութեան ինչպիսի պայմանի ալ վերաբերի, ի շահ անձին իւրոյ և հասարակաց. և կը տեսնենք յայնժամ որ կը նորոգուի մարդկութիւնը ի նոր զօրութիւն:

Ք

Ո շ ղ և ղ ն:

Ուղեղը գործարանաց մէջ ամենէն փափուկն է, ուստի և ամենէն դժուարն ի կրթութիւն. վասն որոյ մեծ փորձ ու գիտութիւն կը պահանջուի ի դաստիարակաց: Գիտնալու են նախ որ եօթը տարուանէ վար եղող տղոց ուղեղն այնպէս կակուղ կ'ըլլայ, թէ և իրենք ողջ և զօրաւոր ըլլան մարմնով, որ չեն կրնար տանիլ ծանր աշխատանաց. անոր համար դպրոցական առաջին կրթութիւններն եօթը տարուանէ վերջը սկսելու է, և այն ալ մեծաւ զգուշութեամբ: Շատ տղաք որ կանուխ դրկուեցան պարոյ, թէ և առաջնոց ողջ էին մարմնով և մտքը, սակայն պարոցական ծանր աշխատանաց ու սխալ առաջնորդութեան տակ՝ տկարացան, և փոխանակ յառաջադիմելու՝ յետամնաց եղան: Եղած է դարձեալ որ տղոց ումանց ուղեղը աստիկ պղտի մնացած է, ապականելով վաղահաս ոսկերացմամբ գանկին կամ ուրիշ հիւանդութեամբք, և այսպիսիք բոլոր իրենց կենացը մէջ ապուշ եղած են. ուստի պէտք է որ ծնողք ու դաստիարակք զգուշութեամբ գործեն թէ որ չեն ուզեր վնասել տղոց:

Եւ զի ուղեղն է մարդուս գլխաւոր գործարանը, որուն վրայ կը ջնանցուի միշտ որ յարմար ըլլայ ամենան մտաւոր գործողութեանց, ինչպէս նաև բանաւոր և հանճարեղ, անոր համար շատ մեծ բան պահանջած չինք ըլլար ի դաստիարակաց, եթէ ուզենք որ ճիշտ գիտութիւն ունենան ուղեղոյ կազմութեան ու կենաց վրայ: Ուշ զնելու են որ ի զարգացման և ի կատարելագործութեան մտաւոր գործունէութեան, լաւ կարգադրեն ուղեղոյ զանգուածը, որուն մէկ փորքիկ խառնակութիւնն ալ կրնայ ծանր հետեւանքներ ունենալ: Այս

խառնակութիւնն կրնայ պատճառիւ կամ 'ի սխալ և 'ի պակաս սննդեղեն և կամ յանկանոնութենէ միջոցաց զարգացման ուղեղոյ, եթէ ուղեղնայն, օրինակի աղաքաւ, բռնաւորել զայն անյարմար ու չափազանց աշխատութեամբ, չտալով յետ վաստակոյ՝ օրինաւոր և անհրաժեշտ հանգիստը:

Եթէ կայ գործարան մը զոր պէտք է խնայութեամբ գործածել, անտարակոյս ուղեղն է, որ գործածուելով կը ձևանայ վրան զանազան նիւթոց խաւ մը, որ կըրբայ արգել ըլլալ մտաց պայծառութեան՝ եթէ իրարու վրայ դիզուելու ըլլայ ու չի մարբոսի, ընդունելով նոր թթուածին՝ վերանորոգելու սպառեալ նիւթը: Արտահանելով 'ի ձեռն շրջաբերութեան արեան խոնկեալ ուղեղոյ զանգուածէն գործածեալ նիւթերն և նոր փոխանակելով՝ հաստատուն օրէնք մ'է գորացնելու ուղեղն ու մտաւոր գործողութիւնը, համապատասխան դադար կամ թնդիստ մը տալով աշխատութեանց, Նոյնպէս մտաւոր աշխատութիւնը յարմարելու է հզօր՝ իրենց տեականութեան մասին՝ ուղեղոյ պայմանին, այսինքն պէտք է նկատել տղուն տարիքը և արեան բանակը: Դարձեալ մտաւոր գործունէութեանց աճումը պէտք է համեմատական ըլլայ ուղեղոյ զանգուածոյն աճման. մեծ զգուշութիւն ընելու է սպորտաց մէջ վատաւորող տղոց վրայ, անոնց՝ որոց ուղեղն տկարութեան նշաններ կուտայ, Զափազանց ու անդէպ բռնութիւնը ուղեղոյ՝ կրնան տկարութիւն և մինչև անկարողութիւն պատճառել 'ի մտաւոր աշխատութիւնս: Ըսածներնէս կը հետիւ ուրեմն որ սպորտաց մէջ մտաւոր աշխատութեանց ժամերն պէտք չէ որ անընդհատ յաջորդեն իրարու, այլ հանգիստ տալու է, ընդմիջելով այնպիսի դասերով՝ որոց համար ուղեղը շատ չի յոգնիր, ինչպէս է զեղեկագործութիւն, զծագործութիւն և ուրիշ ասոնց նման ուսմունքներ: Ընդհանրապէս մէկ դասէ 'ի միւսն քառորդի չափ ժամանակ տալու է, որպէս զի հանգչի տղոց միտքը: Եօթն կամ ութ տարուան սպորտ տղոց համար շատ է մի ժամ մտաւոր աշխատութիւն, բաւական է կէս ժամ:

Մեծապէս օգտակար կրնայ ըլլալ տղոց ուղեղին եթէ հանգստեան ատեն մտաւոր աշխատութեանց ժամերէն ետքը՝ բացօթեայ ելլան ու արտաքին մաքուր օդ շնչեն, վասն զի այսպէսով ոչ միայն կը դիւրանայ թթուածնի ընդունելութիւնը (որ ինչպէս կենսական գործոց նոյնպէս և մտաւոր աշխատութեանց մէջ մեծ մասն ունի), այլ և

ուղեղոյ գոյացութեան նոր ձևացումը և գործածեալ նիւթոց արտահանումը:

Հաշէն ետքը պէտք չէ պարապեցնել յուսումն և ոչ ալ ուղեղոյ չափազանց գործունէութիւն պահանջել, վասն զի 'ի բաց թողլով աշակերտին նոյն ատենն ունեցած անհրաժեշտ մտաց ցրումը, այդ բաներն կը խռովեն դարձեալ մարսողութեան գործը և պատճառ կ'ըլլան գեուարամարտութեան: Դարձեալ թէ որ տարակարգ ու անկանոն մտադրութիւնն չի թողոր որ շնչառութիւնը լաւ կատարուի, որչափ անկի եթէ լեցուն ստամոքսն ճնէ զտոստանին (diaphragma) ընդդէմ թոքից, Արդէն բնութիւնը կը փոխարինէ յօրանչմամբ (որ խորունկ շնչառութիւն մ'է) անխառն շնչոյ տուրեաւոր, ուստի ուսուցիչը աղէկ կ'ընէ եթէ յորդորէ զաշակերտն որ ստէպ խորունկ շնչառութիւններ ընէ: Մտաւոր չափազանց աշխատութիւնը կրնայ աւելցընել նաև սրտին և արիւնային անոթոց գործունէութիւնը և յառաջ բերել նիւթոց ժողովումն՝ պատճառելով ցաւալի հետեւանքներ ոչ միայն ուղեղոյ այլ և կենաց միւս կարևոր գործարանաց:

Գէշ օդն զոր աշակերտը շատ անգամ ստիպեալ են շնչելու, ազդեցութիւն ունի ուղեղոյ վրայ. վասն զի անցնելով արեան միջէն և արեան հետ պտտեւելով ուղեղոյ զանգուածէն, կրնայ փնասակար ըլլալ. Դրպարողական սենեկաց օդն կրնայ փնասել աշակերտաց ուղեղին, մասնաւորապէս ընդածխական թթուութեամբ և արտաշնչեալ նիւթոց առատութեամբ: Դարձեալ յայտնի է թէ պէտք է զգուշանալ այն ամեն բաներէ որ կրնան փնաս բերել ուղեղին, ինչպէս է սաստիկ հարուած գլխու և չափազանց ջերմութիւն կամ ցրտութիւն: Աններելի մեծ յանցանք է ուսուցչաց եթէ տղոց ականջն քաշեն կամ ապտակեն. վասն զի պատահած է որ բարկութեան ատեն չի կարենալով չափել հարուածոյն սասակութիւնը, տղոց մահուան պատճառ եղած են, և կամ տեսանելեաց կամ լսելեաց գործարանքը խանգարած:

Գպրողական հասակին մէջ վատթար առաջնորդութեամբ տղուն ուղեղին եղած փնասն՝ չափազանց ուսման պարապեցնելով, շատ անգամ անդարմանելի կ'ըլլայ նաև հասակն առնելէն ետքը, և պատճառ դիւրագրգռութեան նոյն չի կարենալ հիւանդութեանց, բարոյական ու նիւթական խանգարմանց, անտեղիտալի գլխացաւութեանց և շատ տեսակ ջղային հիւանդութեանց: Այս ամեն փնասուց դիմաց կրնայ առնուիլ թէ որ տղաք աւելի

տրամաբանական ու հասուն խորհրդով գրադին մտաւոր աշխատութեանց, և ուսման նիւթերն աւելի հաւասար կերպով բաժնուին ոտն առ ոտն և ոչ ամենքն միանգամայն, և աւելի երկար ժամանակ յաճախեն 'ի գպրոցս քան ինչ որ խիստ. որպէս զի մտաւոր զարգացումը գահայիծօրէն չըլլայ և ոչ ալ չափազանց բաներ պահանջուի 'ի տէսն ուղեղաց:

Բայց ընդհանրապէս կ'ուզեն ծնողք որ իրենց որդիքը կարելիէն աւելի չուտ իմաստուն ըլլան, և կը բարկանան իսկ դպրոցաց և ուսուցչաց՝ թէ զուականն յետ այնչափ ժամանակաց և աշխատանաց՝ տակաւին տգէտ են. առանց ամենեւին միտ դնելու որ շատ տեսակ նիւթոց մի և նոյն ատեն ուսումը կը խանգարեն միաց գորութիւնը և ձգականութիւնը և կամաց մըղումն ու փափաքը: Եւ համոզուած ենք որ ներկայ մարդկային սերունդը կը մտիչ մտաւորապէս և նիւթապէս ուսմանց անթուելի բազմութենէն: Ժողովրդական՝ դպրոցաց ստորին դասուց համար բաւական է 18 ժամ՝ մտաւոր ուսումն 'ի շարաթու, իսկ բարձրագոյն դասուց 2½ ժամ, տալով յետ դասաւորութեանց կարեւոր հանգիստը: Իրաւ է թէ ուսման ժամուց այսպիսի բաժանմամբ յանկարծ փայլուն ու շացուցիչ արդասիք մը չենք ունենար, բայց սորվածնին աւելի հաստատուն կ'ըլլայ և հետի յազգի ազգի բազմատեսակ անպատեհութեանց: Տկար տղէ բաւական է միայն չափաւոր մտադրութիւն պահանջել, և ոչ մեծ կշիռ ընծայել եթէ աշակերտ մը չի գիտնայ ճշդութեամբ ժամանակագրական թիւերը, իշխանազանց անունները, Սիպերիոյ քաղաքները, կենդանաբանական դասակարգութիւնները, և այլն. կարեւորն այն է՝ որ ողջ մարմին, կենդանի միտք և ուղիղ դատողութիւն ունենայ:

Դարձեալ մեծապէս յանցաւոր են ծնողք չտալով իրենց որդւոցը բաւական ժամանակ քնոյ, վասն զի քնով միայն կրնայ հանգչիլ ուղեղը, մաս մի արտաշնորթեամբ գործածեալ նիւթոց և մաս մ'ալ ձևացմամբ նորոց: Փութը դարձեալ մեծ կարևորութիւն ունի. վասն զի քնոյ ատեն, թութուածինը՝ աղբիւր ամեն կենդանական գործոց և աստիճանաւ մը շարժիչ գորութիւն կենսական մեքենային, կը ժողովի մեր գործարանաց մէջ այնչափ քանակով որով կրնարք տանիլ ապա հսկիմանց ու աշխատանաց: Մեր գործարանաց և մասնաւորապէս ուղեղոյ ընդունակութիւնն կը կախուի 'ի քանակէ թթուածնոյն որ ամբարած ենք յառաջ քան զաշխատութիւն. ուս-

տի տղայ մը պէտք է որ գոնէ ութը ժամ քնանայ:

Ինչպէս որ մարմնակրթութեան մէջ չիդք ու երակք կը զօրանան և գործածութեամբ միշտ աւելի աշխոյժ ու գործօն կ'ըլլան, նոյնպէս դպրոցաց մէջ կը զօրանայ ու կը կատարելագործի աստիճանաբար ուղեղոյ գործունէութիւնը: Գաստրարական կրթիչ է ուղեղոյ, և մարմնակրթի՝ մարմնոյ. երկու կրթիչք ալ պիտի գործեն ըստ հաւասար օրինակ, յիշելով որ թէ՛ երակք և թէ՛ ուղեղն հրահանգութեամբ միայն կը վարժեն, ինչպէս որ քաջանմուտ մարմնակրթի չի կրնար այս կամ այն մարմնոյ երակաց խումբերն առանձին կրթել կամ ուսուցանել մէկ քանի որոշեալ շարժումներն, այլ պիտի ջանայ որ բոլոր կարելի շարժումներն միարան կատարուին, նոյնպէս ալ գաստրարակը չի կրնար ստիպել 'ի գործ ուղեղոյ առանձին մասերը, այլ պիտի փութայ զարգացնել և կատարելագործել պատշաճապէս ուղեղոյ բոլոր կարելի գործերը: Եւ դարձեալ ինչպէս որ մարմնակրթին ամեն բանէ առաջ պէտք է որ ճանչնայ ոչ միայն կենաց ու երակաց կազմութիւնը, այլ և գործարանաց, և գիտնայ թէ որն է օգտակարն երակաց և որ վնասակարն, նոյնպէս գաստրարական հարկ է որ ճիշտ գիտութիւն ունենայ ուղեղոյ և իր մասանցը, եթէ կ'ուզէ զարգացնել պատշաճապէս. և գիտնայ թէ որն է օգտակարն և որ վնասակարն ուղեղոյ և իր մասանցն, ճանչնալով կատարելապէս այն օրէնքներն՝ որովք կը կատարուին ուղեղը և երակաց գործերը, ջանալով դիմել միշտ 'ի լաւագոյն կատարելութիւն: Պարտին ընտրել դարձեալ և գործածել ոչ միայն ուսուցողութեան ներկայ լաւագոյն կերպերը, այլ և ճանչնալ մեր գործարանաց ներքին բնաբանա-տարրալուծական գործերը, զորս եթէ ճանչնալու ըլլան, ոչինչ բանով մը կրնան ուղղել և հակառակաւ վնասել: Դարձեալ ինչպէս 'ի մարմնակրթութեան նոյնպէս և 'ի մտաւոր հրահանգութեան պէտք է ուշ դնել գործարանաց կազմութեան, և ոչ իսկ տկար գործարան մը զօրաւորի պէս աշխատցնել: Եւ վերջապէս գիտնալու են որ ուղեղոյ ինչպէս նաև երակաց կրթութիւնքն զգուշութեամբ ոտն առ ոտն ըլլալու են գիւրդին հրահանգներէ սկսելով, վասն զի մտաւոր բունութիւնք կրնան մեծամեծ անդարմանելի վնասուց պատճառ ըլլալ, և դժբախտ ընել զտղան մինչև ցմահ:

Եւ շարունակութիւն: